ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(Հաշվետու ժամանակահատված՝ 2025 թվականի դեկտեմբերի 11-ից մինչև 2026 թվականի հունվարի 11-ը)

Ես՝ Կոռուպցիայի Կանխարգելման Հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) Հայտարարագրերի վերլուծության վարչության (այսուհետ՝ Վարչություն) փորձագետ Աշխեն Քոչարյանս, հաշվետու ժամանակահատվածում կատարել եմ ստորև ներկայացված հետևյալ աշխատանքները, մասնավորապես.

1) Հանձնաժողովի Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկման արդյունքում ներկայացված Զեկուցագրերով արձանագրված անհամապատասխանությունների ուսումնասիրություն և վերլուծություն, որի արդյունքում Վարչության կողմից ամփոփ Տեղեկանքների նախագծերի պատրաստում՝ Հանձնաժողովի նիստի օրակարգում ներառելու նպատակով: Մասնավորապես, հավելենք, որ վերոհիշյալ աշխատանքների շրջանակներում ուսումնասիրության և վերլուծության են ենթարկվել մի շարք պաշտոնատար անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների (թվով՝ ութ /8/ անձ) կողմից Հանձնաժողով ներկայացրած համապատասխան հայտարարագրերը:

Ի լրումն վերոգրյալի նշեմ, որ սույն աշխատանքների առնչությամբ վարել եմ նաև Հանձնաժողովի՝ Վարչության վերաբերելի նիստի օրակարգի հարցերի գրանցամատյանը:

2) Հանձնաժողովի Կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչության կողմից մամուլում տեղ գտած հրապարակումների հիման վրա ներկայացված Զեկուցագրերի ուսումնասիրության ու համապատասխան վերլուծության արդյունքում Վարչության կողմից ամփոփ Տեղեկանքների նախագծերի նախապատրաստում, որտեղ համապատասխան ուսումնասիրության և մասնագիտական վերլուծության առարկա են հանդիսացել մի շարք հայտարարատու պաշտոնատար անձանց (թվով՝ տասնմեկ /11/ անձ) կողմից Հանձնաժողով ներկայացրած համապատասխան հայտարարագրերը:

3) Հիմք ընդունելով 2024 թվականի դեկտեմբերի 29-ի ԿԿՀ նիստի Որոշումը և 2025 թվականի հունիսի 13-ի ԿԿՀ նիստի Որոշման 5-րդ կետը՝ հայտարարատու պաշտոնատար անձանց վերաբերյալ մամուլի հրապարակման հիման վրա կատարված տվյալների ստուգման արդյունքում իրականացված՝ Հանձնաժողով ներկայացրած

հայտարարագրերի համալիր վերլուծությունների հիման վրա համապատասխան վերլուծությունների արձանագրությունների նախագծերի (թվով՝ երկու /2/) կազմում:

4) Հանձնաժողովի՝ Վարչության վերաբերելի օրակարգային հարցերին առնչվող նիստում կայացված որոշումների արդյունքում Հանձնաժողովի կողմից ելքագրվող գրությունների, մասնավորապես՝ Հանձնաժողովի հայտարարագրերի էլեկտրոնային համակարգում առկա հայտարարագրերի ստուգման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին պարզաբանումներ և/կամ հիմնավորումներ հայցելու, ինչպես նաև հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում ներկայացնելու, բացի այդ, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ու այլ անձան հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց առնչվող տեղեկություններ և փաստաթղթեր պահանջելու ու ստանալու վերաբերյալ գրությունների նախագծերի (թվով՝ յոթ /7/) նախապատրաստում և <<Մալբերի>> էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով ուղարկման գործընթացների իրականացում:

5) Հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց առնչվող տեղեկություններ և փաստաթղթեր պահանջելու ու ստանալու նպատակով՝ Հանձնաժողովի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու այլ անձանցից համապատասխան հարցումների նախապատրաստման և <<Մալբերի>> էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով ուղարկման գործընթացների իրականացման արդյունքում ստացված հարցումների պատասխանների հավաքագրում:

Վարչության պետի հանձնարարությամբ կատարել եմ նաև ընթացիկ այլ աշխատանքներ:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի
Հայտարարագրերի վերլուծության վարչության
փորձագետ՝ Ա.Քոչարյան